

**Գիտության պետական կոմիտեի նախագահ Սամվել Հարությունյանի հարցազրույցը  
«Իրավունք de facto» թերթին**

**Դժվար է կարծրատիպերը հաղթահարել**

**ԿՈՄԻՏԵԻՑ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**

Հայաստանի գիտության ոլորտում գործում են կառավարման երեք տարբեր մեխանիզմներ՝ ակադեմիական, որը համակարգում է Գիտությունների ազգային ակադեմիան, ճյուղային, որով նախարարությունների ենթակայությամբ գործող ինստիտուտներն են զբաղվում և բուհական: Այս երեք համակարգերի միասնական կառավարման մեխանիզմ գոյություն չունի: Թերևս այս անհրաժեշտությունից ելնելով էլ ՀՀ կրթության և գիտության նախարարության կառույցում 2007 թ. ստեղծվեց գիտության պետական կոմիտեն, որի առաջնահերթ նպատակը նշված երեք ճյուղերի աշխատանքը համակարգելն ու գիտության զարգացման միասնական քաղաքականություն մշակելն է: Գիտության ոլորտում առկա խնդիրների մասին է ներկայացվող զրույցը ՀՀ կրթության և գիտության նախարարության գիտության պետական կոմիտեի նախագահ ՄԱՍՎԵԼ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻ հետ:

**- Պարոն Հարությունյան, կրթության հետ մեկ գերատեսչության մեջ ընդգրկված լինելով՝ գիտությունը կարծես պատշաճ ուշադրության չի արժանանում: Չե՞ք կարծում, որ նպատակահարմար է գիտության առանձին նախարարություն ստեղծելը, մանավանդ այդ մասին խոսում էին նախագահական ընտրություններից հետո՝ նոր կառավարություն ձևավորելիս:**

- Իհարկե, ցանկալի կլիներ, որ մեր կառույցին նախարարության կարգավիճակ տրվեր, որովհետև այդպես շատ ավելի հեշտ է իրականացնել բոլոր այն խնդիրները, որոնք մեր առջև դրված են: Կարծում եմ՝ մեր այսօրվա կարգավիճակը ժամանակավոր բնույթ ունի, և հույս ունեմ, որ մոտ ապագայում գիտության պետական կոմիտեն կունենա ավելի բարձր կարգավիճակ:

**- ԳԱԱ-ի և գիտության պետական կոմիտեի գործառույթներն արդյոք չե՞ն համընկնում: Եվ ընդհանրապես, ակադեմիան կարծես խանդով է վերաբերվում Ձեր ղեկավարած կառույցի գոյությանը: Հակասություններն ինչպե՞ս են լուծվում:**

- Թվում է՝ հակասություններ կան, և, ցավոք, ԳԱԱ շատ պաշտոնյաներ նույնպես կարծում են, թե իրենց որոշ գործառույթներ մենք ցանկանում ենք վերցնել: Նման բան չկա: Եթե ուշադիր կարդանք «Գիտության մասին» օրենքը, կտեսնենք, որ 8-րդ և 9-րդ հոդվածները նվիրված են ակադեմիայի հատուկ կարգավիճակին: Այն վարչարարական գործառույթներ չունի: Գիտության և գիտատեխնիկական գործունեության՝ պետության կողմից լիազորված մարմինը կրթության և գիտության նախարարությունն է, որի կազմում այսօր գործում է Գիտության պետական կոմիտեն, և որն էլ իրականացնում է գիտատեխնիկական գործունեության քաղաքականությունը: Իսկ ԳԱԱ հատուկ կարգավիճակը ենթադրում է, որ այն պետք է համակարգի հիմնարար գիտությունը: Ակադեմիան պետության հիմնական խորհրդատուն է հիմնարար գիտության ասպարեզում: Հատուկ կարգավիճակի դրսևորման ձևերից մեկն էլ այն է, որ ակադեմիայի նախագահն իրավունք ունի ներկա լինելու կառավարության նիստերին: Բացի այդ, ԳԱԱ նախագահն իրավունք ունի ակադեմիայի գիտական գործունեության հետ կապված ցանկացած խնդիր անմիջապես ներկայացնել վարչապետին, իսկ վարչապետն արդեն գիտության պետական կոմիտեի միջոցով պարտավոր է մեկ ամսվա ընթացքում ԳԱԱ-ի ներկայացուցիչների մասնակցությամբ

քննարկել այդ հարցերն ու լուծում տալ: Այսինքն՝ մեր գործառույթները տարանջատված են: Սակայն երկուսիս նպատակը մեկն է՝ գիտության զարգացումը: Գիտության մենեջմենթը՝ կառավարումը, ֆինանսավորումը, միջազգային կապերը, ֆինանսավորման ձևերի հստակեցումը, գիտական քաղաքականությանը վերաբերող այս և այլ հարցերը մեր իրավասության շրջանակներում են: Գիտության պետական կոմիտեն և ԳԱԱ-ն իրար լրացնող կառույցներ են: Ամեն մեկն աշխատանքի իր ոլորտն ունի, և միմյանց պետք է օգնեն, ոչ թե խանգարեն:

***-Հայաստանն ունի հսկայական գիտական տնտեսություն՝ ԳԱԱ-ի 40 գիտական հիմնարկները, տարբեր նախարարությունների 30 ճյուղային ինստիտուտները: Արդյո՞ք այն ուռճացված չէ, և օպտիմալացման կարիք չկա՞:***

-Օպտիմալացման անհրաժեշտությունն ակնհայտ է: Հայաստանում մոտ 130 հիմնարկ կա, որ սնվում է գիտության բյուջեից: Իտալիայի նման երկիրը, որն ունի 70 մլն բնակչություն, այդքան շատ գիտական հիմնարկներ չունի: Ընդ որում, գիտության ոլորտի՝ մեր և Իտալիայի բյուջեներն անհամեմատելի են: Միևնույն ժամանակ կան հիմնարկներ, որոնք զբաղվում են գրեթե նույն խնդիրներով: Բնականաբար, պետության առջև խնդիր է դրված օպտիմալացման միջոցով գիտական խնդրի շուրջ միավորել այդ հաստատությունները: Իսկ ազատված տարածքները, ըստ իս, ոչ թե պետք է օտարվեն, այլ օգտագործվեն գիտակրթական գործունեությունը բարելավելու համար: Այդ տարածքներում կարելի է ստեղծել գիտաուսումնական լաբորատորիաներ: Հայաստանը լուրջ հիմքեր ունի Մերձավոր Արևելքի, Հարավարևելյան Ասիայի այլ երկրների համար լինելու գիտելիք վաճառող երկիր: Այսինքն՝ մենք կարող ենք դրսից մագիստրոսներ, ասպիրանտներ բերել և այդ տարածքներն օգտագործել որպես գիտակրթական լսարաններ, լաբորատորիաներ կամ հանրակացարաններ, որի դիմաց կստանանք համապատասխան վարձավճար: Դա օգտակար է նաև բուհերի համար, որտեղ մակերեսների լուրջ խնդիր կա: ԵՊՀ մեկ ուսանողին, օրինակ, բաժին է ընկնում մոտ 3,5 քմ համալսարանական տարածք: Դա միջազգային ոչ մի ստանդարտի մեջ չի մտնում: Եվրոպական չափանիշերով յուրաքանչյուր ուսանող պետք է ունենա 12-16 քմ մակերես: Այսինքն՝ մեր բուհերն այսօր զարգացման ոչ մի հեռանկար չունեն: Գիտելիքի առևտրայնացման միջոցով ԱՄՆ-ը տարեկան 120 մլրդ դոլար է աշխատում, Անգլիան՝ մինչև 10 մլրդ ֆունտ ստեռլինգ: Օգտագործելով մեր գիտական ներուժը՝ մեր գիտելիքը կարող ենք վաճառել օտարերկրացիներին, ինչն էապես կլուծի բյուջեի որոշ խնդիրներ: Հայաստանն այն եզակի երկրներից է, որտեղ գիտական բոլոր հիմնարկները գոյատևում են պետական դոտացիայի շնորհիվ: Դա նորմալ երևույթ չէ: Աշխարհի փորձը ցույց է տալիս, որ նման հիմնարկները մահանում են: Ճիշտ է, գիտության ոլորտին հատկացվող գումարները մեծ չեն (22 միլիոն դոլար), սակայն այդ գումարի նպատակային օգտագործումը, կարծում եմ, արդյունքներ կապահովի:

***-Գիտության ոլորտը բարեփոխումների շեմին է: Ի՞նչ ուղղությամբ են ընթանալու բարեփոխումները:***

-Նախևառաջ պետք է որոշվեն գիտական գերակայությունները, ինչն այս տարվա ընթացքում փորձելու ենք անել: Շատ կարևոր են նաև համաշխարհային գիտական գերակայությունները, որովհետև Հայաստանը չի կարող մեկուսացած գոյություն ունենալ: Հաջորդ խնդիրն առաջիկա 10-15 տարիների համար գիտության զարգացման ռազմավարական ծրագրի մշակումն է: Լուրջ բարեփոխումների կարիք ունի «Գիտության մասին» օրենքը, որը պետք է լինի մեր ժամանակներին համահունչ: Ե՛վ ակադեմիան, և՛ ճյուղային ինստիտուտները պետք է հստակ պատկերացնեն՝ իսադի ինչ կանոններով են աշխատելու: Պետք է վերանայվի նաև գիտական աստիճանաշնորհման համակարգը:

**-Հայաստանում չի ապահովվում կրթություն-գիտություն-տնտեսություն կապը: Այդ ուղղությամբ ի՞նչ է արվում:**

-Համակարգի օպտիմալացման հիմնական նպատակներից մեկն այս հարցին պատասխան տալն է: Մշակվում է գիտական կենտրոնների ստեղծման կարգ, որը շուտով կներկայացվի կառավարություն: Ենթադրվում է, որ կենտրոններում այդ հարցն առանցքային է լինելու: Դրանք կձևավորվեն հիմնականում կրթություն-գիտություն-արտադրություն կապն ապահովելու սկզբունքով: Ապագայում կզարգանա խիստ ծրագրային ֆինանսավորման տարբերակը: Շուկայական հարաբերությունների համակարգ ունեցող պետության մեջ խաղի կանոնները սրանք են: Եվ ինչքան շուտ հասկանանք դա, այնքան մեր վիճակն ավելի կբարելավվի:

**-Վերջերս հաճախ քննադատում են Ձեզ՝ որպես կառույցի ղեկավարի: Ակնհայտ է, որ գիտության ոլորտում խաղի նոր միասնական կանոններ սահմանելով՝ շատերի ուտքը տրորում եք: Այդ դժգոհության կապակցությամբ ի՞նչ կարող եք ասել:**

-Գիտության պետական կոմիտեն պետական կառույց է և աշխատում է պետության կողմից սահմանված օրենքների շրջանակում: Բոլորը պետք է հասկանան՝ օրենքը բոլոր պարագաներում գերակա է: Եթե պետությունը գումար է ծախսում, դրա դիմաց ինչ-որ բան պետք է ակնկալի: Գիտությունը փակ համակարգ չէ: Այն զարգանում է բաց համակարգում: Հետևաբար բաց համակարգին յուրահատուկ խաղի բոլոր կանոնները մեզ համար պետք է ընդունելի լինեն՝ անկախ առանձին անձերի ցանկություններից: Ես շատ լավ հասկանում եմ՝ ինստիտուտների տնօրենների մի մասը լուրջ տարածքում իրենց իշխանիկներ է պատկերացնում, բայց այդ հիմնարկների հիմնադիրը պետությունն է, որի սահմանած խաղի կանոնները պարտավոր ենք ընդունել բոլորս: Բիարկե, դժվար է արմատացած կարծրատիպերը հաղթահարել: Երբ ես նշանակվեցի այս պաշտոնում, հանրապետության նախագահն ինձ զգուշացրեց, որ ոլորտը ծանր է, հավակնոտ, և անելիքներ շատ կան: Ես զգում եմ պատասխանատվության հսկայական բեռը, ամեն ինչ շատ լավ պատկերացնում եմ՝ գիտեմ թե՛ լաբորանտի, թե՛ լաբորատորիայի վարիչի, թե՛ գիտական հիմնարկի ղեկավարի հոգսերը: Ինքս անցել եմ բոլոր ճանապարհներով: Մեր հիմնական նպատակն այդ հոգսերը հնարավորինս թեթևացնելն է, որպեսզի շարքային գիտնականն իր աշխատանքից և՛ հաճույք ստանա, և՛ ունենա ազատ ստեղծագործելու հնարավորություն:

*«Իրավունք de facto», 29 հուլիսի, երեքշաբթի, 2008*

*Զրույցը՝ Լիլիթ Գրիգորյանի*